



թ. 8. Աստուածաշունչ Ոսկան վ.ի, էջ 470.



թ. 9. Աւետարան 1729ի, էջ 142.
Ստորագր. ԳՐ ստորեւ ձախակողմը:

Գրաթուած պատկերի օրինակ մըն է հոս գործածուած թիւ 1 նկարը:

Ոսկանի Աստուածաշունչին պատկերները մէկ հեղինակի մը գործը չեն, այլ շատ մը հեղինակներու, զորս մէկ փայտափորագրիչ մը օրինակած է և փորագրած: Փորագրիչին ինքնութիւնը անյայտ չի մնար ինծի, ան իւրաքանչիւր պատկերի մէջ ունի իր անխուսափելի մենագիր ստորագրութիւնը սա ձեւով. CHRISTOFFEL VAN SICHEM երէց: Երբեմն պատկերներուն մէջ կան նաեւ ստորագրութիւնները նշանաւոր զծագրիչ հեղինակներու յրպէս օր. հոս, թ. 2. պատկերին ներքեւ Albrecht Durer (1471-1528) և ուրիշներու: Ինչպէս ըսի, ուրիշ առթիւ Ոսկանի տպագրութիւնը նկատի պիտի ունենամ և այն ատեն աւելի ընդարձակօրէն պիտի խօսիմ:

Ոսկանի Աստուածաշունչին նկարներն եղան գլխաւոր՝ եթէ ոչ միակ՝ ներշնչարանը Հայ պատկերագործ տպագրական

փայտափորագրիչներուն: Առ այդ իբրեւ նմոյշ յարգելի ընթերցողներուն կը ներկայացնեմ քանի մը հատը անոնցմէ՝ որոնք Ոսկանի Աստուածաշունչին պատկերները իբր ընտանիք ունեցած են իրենց արտատպութեանը համար: Սակայն հոս աւելցնեմ որ Ոսկանի ուրիշ գործերը թէեւ կը պակսին ինծի, սակայն ան որ 1664ին Ամստերտամ հրատարակած Հայերէն «Երաժշտական երգեցմունք» հրատարակութիւնը նոյնպէս պատկերագրողած է Christoffel van Siche (երէց) փորագրած նկարներով:

Ոսկանի Աստուածաշունչին 431 էջի պատկերը (հոս նկար թիւ 3) օրինակուած կը գտնենք 1729ին Տրուպ Աստուածատուրէն հրատարակուած Աւետարանին մէջ, տպագրուած ի կ. Պոլիս: Այդ օրինակութիւնը հոս կու տամ (նկար թիւ 4). և սակայն 1722ին ալ նոյնը՝ 1729ինէն տարրեր, արդէն անգամ մը արտագծուած կը գտնեմ, այս անգամ Մարտիրոս զպիրի